


# Հայաստան, Արցախ եւ Ատրպէյճան «Վառօղի Տակառ»

Յարութիւնեան — «Կանգնած ենք Ազգամիջեան Պատերազմի Սեմին»:  
Երկու Հանրապետութիւններուն Ղեկավարները կը Կանչուին Մոսկուա

Վերջին շաբաթ Հայաստանի, Ատրպէյճանի եւ Արցախի մէջ տիրող սուր կացութիւնը ծայրաստիճան մտահոգիչ համեմատութեան մը հասաւ: Այնքան որ, Խորհրդային պաշտօնաթերթ «Քրասնայա Չվեստա» խրոստովեալ շրջանը բաղդատեց

վառօղարանի մը, որ «փոքրագոյն կայծի մը կրնայ բռնկիլ»: Իր կողմէ Հայաստանի Կենտկոմի Ա. Քարտուղար Սուրէն Յարութիւնեան Երեւանի հեռատեսիլէն վտանգի ահազանգ մըն է, որ արձակեց 28 Փետրուարին, յայտարարելով որ ծայրաս-

տիճան շիկացած իրադրութիւնը օրհասական դարձած է, եւ թէ հայերն ու ատրպէյճանցիները «կանգնած են ազգամիջեան պատերազմի սեմին»: (Յարութիւնեանի ճառը կը հրատարակենք առանձին):



Զրահապատ կառեֆերը կը հսկեն Արցախի ազերի գիւղի մը մէջ, որուն բնակիչները յարձակած էին հայկ. Պատարա գիւղին վրայ

Պաքուի մէջ, անցեալ շաբաթավերջին տասնեակ հազարաւոր անձերու մասնակցութեամբ տեղի ունեցաւ հաւաք, ղեկավարութեամբ «Ժողովրդային Ճակատ» անպաշտօն կազմակերպութեան, որուն եթէ հեռակայ յառաջադրանքն է Ատրպէյճանի առաւել ինքնավարութիւնը եւ «գերիշխանութիւն»ը, սակայն ներկայիս հետապնդուած անմիջական նպատակն է Արցախի վրայ Պաքուի գերիշխանութեան վերահաստատումը: Պատաստաններուն վրայ կարելի էր կարգալ՝ «Ղարաբաղի հարցը յարձակում մըն է Ատրպէյճանի Գերիշխանութեան դէմ», ու կը պահանջուէր Վոլսքիի գլխաւորած մասնաւոր Յանձնախումբին լուծարքը: Հաւաքի ընթացքին կ'որոշուէր նաեւ, ընդհանուր գործադուլ մը մինչեւ 1 Հոկտեմբեր, որու ընթացքին բաց պիտի մնային սննդեղէնի խանութները եւ պիտի շարունակէին աշխատիլ միայն փոխադրական սպասարկութիւնները: Փակ պիտի մնային նոյնիսկ դպրոցները:

Գործադուլի որոշուած թուականը (մինչեւ 1 Հոկ-

# «ՎԱՌՕՒ»

(Շար. առաջին էջէն)

տեմբեր - ուսումնասիրուած թուական մըն է, քանի այն ատեն է որ պիտի կայանայ Գերագոյն Սովետի նիստը, որ պիտի զբաղի ազգութիւններու - եւ նաեւ - Արցախի ճակատագիրով, Արցախ զրկուած Երեսփոխանական Յանձնաժողովին տեղեկագիրին լոյսին տակ: Ատրպէյճանցիները ամիս մը կ'ուզեն ճնշումի եւ պլէքմէյի տակ պահել Մոսկուան, արգելք ըլլալու համար հայերու ի նպաստ որոշումի մը:

Այս մասին աւելի տեղեկութիւններ կը հայթայթէ «Նիւ Եորք Թայմզ»-ի թղթա-

ւե այդ ձեւով ժողովրդակա-նութիւնը հասիլ: Վերոյիշեալ ճակատին դեկաւարներէն մէկը՝ Արիֆ Ալիեւ կոչուող, թղթակիցին յայտնած է թէ

«Լեռնային Ղարաբաղի հարցը Ատրպէյճանի իսկական խնդիրը չէ. իրական հարցերը քաղաքական եւ տնտեսական գերիշխանութեան կը վերաբերին, ինչպէս նաեւ մարդկային իրաւունքներուն եւ բնապահութեան: Սակայն Լեռնային Ղարաբաղի հարցը այնքան վտանգաւոր եւ սաստկացած է, որ կը խարանէ այդ բոլոր հարցերը»: Պարուի ցոյցի ընթացքին երեւցած են նաեւ 1918ի կարծատեւ հանրապետութեան շրջանի ազգային դրօշակները:

Ահա «վառուղի» այս տակա-



ԼՈՒՍԱՆԿԱՐ «ՆՈՒ ԵՈՐԷ ԹԱՅՄԱԶ» ԱԼԵՔՍԱՆՏՐԱ ԱՌԱԿՆԱՆ

Անահիտ Իսրայէլեան, իր գաւակներով, Արցախի Պատարա հայկական գիւղին մէջ որ շրջապատուած է ագերի գիւղերով: Ընտանիքին հայրը՝ Ռուբէն վերջերս սպաննուեցաւ ագերիի մը կողմէ

կիցը, շարաթափերջին Պարուէն զրկած իր թղթակցութեան մէջ (Կիրակի, 3 Սեպտեմբեր), ուր կը գրէ թէ Պարուի հաւաքին հաւաքուած ամբոխին համար գլխաւոր հարցը կը կայանար Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը, եւ թէ «ժողովրդային ճակատը» իշխանութեան դէմ ժողովուրդին ունեցած բազմակողմանի դժգոհութիւնները կ'ուզէ այժմ բեւեռել Արցախի հարցին շուրջ

որ հեռացնելու համար է որ Մոսկուա իր մօտ կանչեց Հայաստանի եւ Ատրպէյճանի դեկաւարները, որպէսզի անոնց պարտադրէ երկխօսութեան մը փորձը: Իսկ Մարզին ապագայ գոյափիճակին կապակցութեամբ կարգ մը լուծումներու մասին կը խօսի «Նիւ Եորք Թայմզ»-ի թղթակիցը որ Արցախ այցելած է: Առանձին կը ներկայացնենք ամերիկացի լրագրողին գրութեան ամփոփումը:

## Հայաստանի եւ Ատրպէյճանի Ղեկավարներու Հանդիպում Մոսկուայի Մէջ

Մոսկուայի Համայնավար Կուսակցութեան Կեդրոնին մէջ ժողովի նստած են Հայաստանի եւ Ատրպէյճանի Համայնավար Կուսակցութեան Քաղղիւանի անդամները եւ անդամակցութեան թեկնածուները գլխաւորութեամբ Սուրէն Յարութիւնեանի եւ Վեգիրովի: Հանդիպումին մասնակցած են Խ. Միութեան Փոլիթպիւրոյի անդամներէն Վ. Չեքրիկով եւ Ն. Սլեռնկով:

Երկու հանրապետութիւններուն միջեւ ստեղծուած կացութիւնը նկատուած է մտահոգիչ եւ վտանգաւոր՝ ալ աւելի խորանալու վտանգով: Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խախտած են տնտեսական կապերը, իսկ հանապարհները՝ փակուած կամ շրջապատուած: Առանձնակի տագնապ կը ստեղծեն գրկանքներու մէջ գտնուող գաղթականներու խնդիրը, անոնց անորոշ վիճակը: Երկու հանրապետութիւնները դադրեցուցած են իրենց միջեւ երկխօսու-

թիւնը, ինչ որ չի ծառայեր հարցերուն լուծումին:

Երկու կողմերը համաձայնած են, որ առաջին հերթին կուսակցական, խորհրդային ու հասարակական կազմակերպութիւններու միջոցով ամէն ինչ ընել՝ կուտակուած հարցերը քայլ առ քայլ լուծելու, ամէն մակարդակի վրայ երկխօսութիւն ստեղծելու, քաղաքական, տնտեսական եւ մշակութային կապերը վերահաստատելու, ու մանաւանդ՝ ապահովելու իրաքանչիւր անհատի անվտանգութիւնը:

Ներկաները կարեւորութեամբ անդրադարձած են նաեւ Արցախի հարցին, եւ եկած են այն եզրակացութեան, որ Ինքնավար Մարզին հարցը իր լուծումը կրնայ գտնել միայն «Սահմանադրական, դեմոկրատական» հիմքերու վրայ: Հետեւաբար Արցախի մէջ չկայ հարց մը, որուն լուծումը կարելի չըլլայ գտնել «փոխադարձ հանդուրժողութեամբ»: